Օրինակ №_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

№ 1074

«17» 08 2006թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի պահանջներով, ինչպես նաև ՀՀ ՊՆ կարգապահական գումարտակում քրեական պատիժ կրող դատապարտված զինծառայողների առօրյան կանոնակարգելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգը» (կցվում է):

2. Հրամանը հասցնել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալներին, պաշտպանության բանակի, բանակային կորպուսների հրամանատարներին, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության պետին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

«Հաստատում եմ»

ՀՀ Պաշտպանության նախարար

Ս.Ա.Սարգսյան

«___»_____2006թ.

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարգապահական գումարտակի

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ պաշտպանության նախարարության կարգապահական գումարտակի (այսուհետ՝ գումարտակ) ներքին կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ), սահմանում և կանոնակարգում է կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողների (այսուհետ՝ դատապարտյալներ) իրավունքների, ազատությունների և պարտականությունների իրականացման կարգը, դատապարտյալին գումարտակ ընդունելու կարգը, դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները, հագուստի ձևը, սննդամթերք և առաջին անհրաժեշտության իրեր ձեռք բերելու կարգը, դատապարտյալի վարքագծի կանոնները, դատապարտյալին արգելված առարկաների և իրերի ցանկը, արգելված առարկաներն առգրավելու, դատապարտյալի և կացարանի խուզարկություն, ինչպես նաև նրա իրերի զննություն կատարելու, տեսակցության, նամակագրության, ծանրոցները, հանձնուքները և փաթեթները դատապարտյալին հանձնելու, հեռախոսակապից օգտվելու կարգը, օրվա կարգացուցակը, գումարտակի սահմաններից դուրս գտնվելու թույլտվություն ստացած դատապարտյալի վարքագծի կանոնները, դատապարտյալին կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու կարգը, դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցների կիրառման հիմքերն ու կարգը, պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովման պայմանները, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքից, ՀՀ զինված ուժերի կանոնագրքերից և այլ իրավական ակտերից բխող այլ հարաբերությունները:

1.2. Կանոնակարգի պահանջները պարտադիր են գումարտակի հրամանատարության, այնտեղ պահվող դատապարտյալների, ինչպես նաև գումարտակ այցելող անձանց համար: Կանոնակարգի խախտումը հանգեցնում է սույն կանոնակարգով և օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

2. Դատապարտյալին գումարտակ ընդունելու կարգը

2.1. Գումարտակ բերված դատապարտյալի ընդունումն իրականացվում է գումարտակի հրամանատարի կողմից նշանակված պաշտոնատար անձի (անձանց) կողմից:

2.2. Դատապարտյալին գումարտակ ընդունելու համար իրավասու պաշտոնատար անձը (անձինք) ստուգում է ընդունման վերաբերյալ լրացված փաստաթղթերը, անձնական գործի առկայությունը և դրանք համեմատում ընդունվող անձի անձնական տվյալների հետ: Գումարտակ ընդունելու հիմք հանդիսացող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն համապատասխան պաշտոնատար անձանց ստորագրությամբ և վավերացված զինանշանի պատկերմամբ կնիքով:

2.3. Գումարտակ ընդունվող դատապարտյալը ենթարկվում է նախնական բուժզննության: Բուժզննության արդյունքները գրանցվում են բժշկական ամբուլատոր քարտում և անձնական գործում, միևնույն ժամանակ բուժզննության ընթացքում մարմնական վնասվածքների հայտնաբերման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն, որը կցվում է անձնական գործին:

2.4. Գումարտակ ընդունվող դատապարտյալը պարտադիր ենթարկվում է խուզարկության, իսկ նրա իրերը՝ զննության: Խուզարկության կամ զննության ընթացքում հայտնաբերված արգելված իրերը և առարկաները առգրավվում են և հանձնվում պահպանման կամ ոչնչացվում են գումարտակի հրամանատարի որոշմամբ: Նշված գործողությունների վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն, որը կցվում է անձնական գործին:

2.5. Անձնական գործը պետք է ներառի դատապարտյալի անձին եւ պատիժը կատարելուն վերաբերող պարբերաբար թարմացվող տեղեկություններ, այդ թվում՝ դատապարտյալի նկատմամբ

նախկինում կիրառված խափանման միջոցի մասին, գումարտակ ընդունելու եւ պատժից ազատելու ամսաթվերը: Անձնական գործին կարող են ծանոթանալ դատապարտյալը եւ միայն նման լիազորություն ունեցող անձը: Գումարտակի հրամանատարությունը երաշխավորում է դատապարտյալի անձնական տվյալների պաշտպանվածությունը հասարակական հետաքրքրասիրությունից:

2.6. Սույն կանոնակարգի 2.3. և 2.4. կետերի պահանջները կատարելուց հետո դատապարտյալը գումարտակի հրամանատարի հրամանով գրանցվում է հրամանագրքում և կանգնեցվում բոլոր տեսակի բավարարումների: Դատապարտյալների բաշխումը կացարանում և ըստ ստորաբաժանումների իրականացվում է գումարտակի հրամանատարության կողմից, հաշվի առնելով դատապարտյալի անձը, տարիքը, առողջական վիճակը, կատարած հանցագործության բնույթը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են խոչընդոտել անվտանգության ապահովման կազմակերպմանը:

2.7. Համապատասխան ստորաբաժանումում տեղավորվելուց հետո դատապարտյալը գումարտակի պայմաններին հարմարվելու նպատակով անցնում է նախապատրաստական փուլ (կարանտին)՝ մինչև յոթ օր ժամկետով, որի ընթացքում տեղեկացվում է իր հիմնական իրավունքներին եւ պարտականություններին, գումարտակի ներքին կանոնակարգին, ինչի մասին տեղեկանքը կցվում է դատապարտյալի անձնական գործին:

2.8. Գումարտակի հրամանատարությունը դատապարտյալի գումարտակ ընդունվելու մասին անհապաղ տեղյակ է պահում դատապարտյալի մերձավոր ազգականներին կամ դատապարտյալի նշած անձանց: Գումարտակի հրամանատարությունը դատապարտյալի գտնվելու վայրի մասին նշված անձանց չի հայտնում, եթե դատապարտյալը գրավոր դիմում է ներկայացրել այդ մասին:

3. *Գումարտակում դատապարտյալի վարքագծի հիմնական կանոնները*

3.1. Դատապարտյալի վարքագծի կանոնները գումարտակում բխում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով, ՀՀ ԶՈՒ կանոնագրքերով և իրավական այլ ակտերով սահմանված նրա հիմնական իրավունքներից ու պարտականություններից:

3.2. Դատապարտյալն իրավունք ունի՝

ա) տնօրինել օրակարգով նախատեսված անձնական ժամանակը՝ չխախտելով վարքագծի հաստատված կանոնները,

բ) գումարտակի հրամանատարության և անձնակազմի կողմից բարեկիրթ վերաբերմունքի,

գ) պահել, ստանալ, ձեռք բերել և օգտագործել իրեն համար թույլատրելի իրերը և առարկաները (Հավելված 1),

դ) մասնակցել մարզական և մշակույթային միջոցառումների, օգտվել գրադարանից, սեղանի խաղերից, իր միջոցներով բաժանորդագրվել թերթեր, ամսագրեր,

ե) ստանալ տեղեկություններ իր իրավունքների և պարտականությունների մասին,

զ) օգտվել փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական օգնություն տրամադրելու իրավունք ունեցող այլ անձանց ծառայություններից,

է) առաջարկություններով, դիմումներով և բողոքներով դիմել գումարտակի հրամանատարությանը կամ վերջինիս վերադաս հրամանատարությանը, դատարան, դատախազություն, պետական իշխանության այլ մարմիններին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջպետական մարմիններին, եթե դատապարտյալի իրավական պաշտպանության համար սպառվել են առկա ներպետական բոլոր միջոցները,

ը) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ, այդ թվում՝ պահպանել նամակագրություն, ունենալ տեսակցություններ, կարճաժամկետ մեկնումներ, օգտվել հեռախոսակապից, գրականությունից և լրատվական միջոցներից,

թ) առողջության պահպանության և անձնական անվտանգության:

3.3. Դատապարտյալին երաշխավորվում է խղճի և դավանանքի ազատություն: Խղճի և դավանանքի ազատության իրավունքն իրականացվում է հոժարակամ: Դատապարտյալին արգելվում է օգտագործել ծակող և կտրող առարկաների ձևով պաշտամունքի առարկաներ, թանկարժեք քարերից կամ մետաղից պատրաստված կամ պատմական արժեք ներկայացնող իրեր, ինչպես նաև իրականացնել հոգևոր քարոզչություն:

3.4. Դատապարտյալի իրավունքների իրականացման ժամանակ չպետք է խախտվեն պատժի կրման կարգն ու պայմանները, ինչպես նաև այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

3.5. Դատապարտյալը պարտավոր է՝

ա) պահպանել սույն Կանոնակարգի պահանջները, գումարտակում սահմանված օրվա կարգացուցակը և ռեժիմի ներքին կանոնները,

բ) խնամքով վերաբերել գումարտակի գույքին,

գ) բարեկիրթ լինել մյուս դատապարտյալների և այլ անձանց նկատմամբ, անվերապահորեն կատարել գումարտակի հրամանատարության օրինական պահանջները,

դ) մաքուր և կոկիկ պահել կացարանը և ծառայողական սենյակները, հագուստը, անկողինը, պահպանել անձնական հիգիենայի կանոնները, ունենալ կարճ սանրվածք,

ե) ներկայանալ գումարտակի հրամանատարության պահանջով, տալ գրավոր բացատրություններ՝ պատժի կրման սահմանված կարգի խախտման փաստի և այլ հանգամանքների վերաբերյալ,

զ) անցնել բժշկական զննություն՝ վարակիչ հիվանդությունների հայտնաբերման և կանխարգելման, ինչպես նաև ալկոհոլ, թմրանյութեր, թունանյութեր կամ հոգեմետ նյութեր օգտագործելու հանգամանքը ժամանակին պարզելու նպատակով,

է) պահպանել հակահրդեհային կանոնները,

ը) մասնակցել գումարտակի և նրան հարող տարածքի բարեկարգման աշխատանքներին,

թ) գումարտակի հրամանատարական կազմին դիմել զինվորական կոչումով, նախապես հավելելով «պարոն» բառը, իսկ մյուս զինծառայողներին՝ ազգանվամբ կամ կոչումով՝ նախապես հավելելով «պարոն» բառը:

3.6. Դատապարտյալին արգելվում է՝

ա) կազմակերպել և անցկացնել ցույցեր, միտինգներ,

բ) խախտել շինությունների պահպանության գիծը կամ գումարտակի տարածքի սահմանները,

գ) առանց հրամանատարության թույլտվության գտնվել այլ կացարաններում կամ ծառայողական սենյակներում,

դ) ձեռք բերել, պատրաստել, պահել և օգտագործել արգելված իրեր, որոնք նշված են սույն Կանոնակարգի 7.4 կետում,

ե) ծխել դրա համար չնախատեսված վայրերում,

զ) անձնական օգտագործման սննդամթերքը, առարկաները, իրերը և նյութերը վաճառել կամ այլ կերպ օտարել այլ դատապարտյալների,

է) նյութական կամ այլ շահ ստանալու նպատակով զբաղվել մոլեխաղերով կամ ցանկացած խաղով,

ը) դաջվածքներ անել իր կամ այլ անձանց մարմնի վրա,

թ) առանց հրամանատարության թույլտվության պահել կենդանիներ, ձկներ և թռչուններ, զբաղվել բանջարաբուծությամբ և սենյակային բուսաբուծությամբ, ստեղծել կենդանի բնության անկյուններ,

ժ) պոկել պատերին փակցված փաստաթղթերը, պլակատները, ցուցանակները և հայտարարությունները,

ժա) պատերին, պահարաններին և մահճակալներին փակցնել լուսանկարներ, վերարտադրանկարներ, բացիկներ, թերթերից կամ ամսագրերից կտրվածքներ,

ժբ) սնունդ պատրաստել և օգտագործել դրա համար չնախատեսված վայրերում,

ժգ) բարձրանալ շենքերի, շինությունների և այլ կառույցների տանիքները, առանց հրամանատարության թույլտվության մոտենալ ներքին արգելագոտու պարիսպին,

ժդ) բղավել, աղմկել, խանգարել անդորրը,

ժե) պատուհաններից նետել կամ փոխանցել իրեր և կանգնել լուսամուտագոգերին,

ժզ) գումարտակի տարածքով շարժվելու ժամանակ դուրս գալ շարքից, ծխել շարքում, գետնից վերցնել որևէ իր,

ժէ) կացարանում կամ ծառայողական սենյակներում պահել սննդամթերք,

ժը) պատրաստել ինքնաշեն էլեկտրական սարքեր և օգտվել դրանցից:

4. Օրվա կարգացուցակը

4.1. Գումարտակում սահմանվում է օրվա կարգացուցակ:

4.2. Օրվա կարգացուցակը ներառում է՝ վերկացի, հանգստի, զբոսանքի, անվանականչի, հարդարանքի, մարմնամարզանքի, սննդի ընդունման, ուսման, սպորտային և այլ միջոցառումների, ինչպես նաև ֆիզիկական և մարտական պատրաստականության համար սահմանված ժամերը: Ֆիզիկական եւ մարտական պատրաստականության դասընթացները դատապարտյալի հետ անցկացվում են կարգապահական գումարտակի հրամանատարության կողմից՝ ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ սահմանած հատուկ ծրագրով:

4.3. Օրական մեկ անգամ կազմակերպվում է բոլոր դատապարտյալների ստուգատես, որի ժամանակ ստուգվում է նրանց արտաքին տեսքը:

4.4. Գումարտակում դատապարտյալները շուրջօրյա գտնվում են հրամանատարության անմիջական հսկողության ներքո:

4.5. Դատապարտյալների սննդի ընդունումը կազմակերպվում է ճաշարանում, օրվա կարգացուցակով սահմանված ժամերին, ըստ ստորաբաժանումների:

4.6. Պատժախցում պահվող դատապարտյալի սննդի ընդունումը կատարվում է խցում:

4.7. Դատապարտյալների քանակական և անվանական հաշվառումն իրականացվում է այդ նպատակով սարքավորված շարահրապարակում: Հաշվառմանը մասնակցելուց ազատվում են գումարտակի բժշկի ցուցմամբ անկողնային ռեժիմի հիվանդները կամ վարակիչ հիվանդություններով (գրիպ, անգինա, կարմրուկ և այլն) հիվանդ դատապարտյալները:

4.8. Անբարենպաստ եղանակային պայմաններում դատապարտյալների քանակական կամ անվանական հաշվառումն անց է կացվում կացարանում:

4.9. Հաշվառումների կազմակերպման և դրանց արդյունքների համար պատասխանատու է գումարտակի հերթապահը:

4.10. Գումարտակի տարածքում՝ կացարանից դուրս, դատապարտյալների խմբի տեղաշարժն իրականացվում է շարքով՝ համապատասխան հրամանատարի ուղեկցությամբ և պահակային խմբի հսկողությամբ:

4.11. Երեկոյան անվանականչից մինչև վերկաց արգելվում է դատապարտալների տեղաշարժը կացարանի սահմաններից դուրս:

5. Դատապարտյալի անձնական ընդունելությունը

5.1. Դատապարտյալի անձնական ընդունելությունն իրականացվում է հրամանատարի կողմից, գումարտակի տարածքում, աշխատանքային ժամերին: Ընդունելության մտած դատապարտյալի, նրան հետաքրքրող հարցերի, դրանց ուսումնասիրման արդյունքների հաշվառումն իրականացվում է համապատասխան մատյանով (Հավելված 2), որը պահվում է գումարտակում:

5.2. Դատապարտյալի անձնական ընդունելությունն իրականացվում է գումարտակի հրամանատարին ուղղված գրավոր դիմումի հիման վրա: Դիմումը կցվում է դատապարտյալի անձնական գործին:

6. Դատապարտյալների հագուստը և իրային ապահովումը

6.1. Դատապարտյալները կարգապահական գումարտակում կրում են պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զինծառայողի համար նախատեսված համազգեստ՝ առանց տարբերանշանների:

6.2. Յուրաքանչյուր դատապարտյալի իրային ապահովումն իրականացվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զինծառայողի համար սահմանված նորմերին համապատասխան:

7. Դատապարտյալի կողմից սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը

7.1. Դատապարտյալն իր միջոցներով սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ, ինչպես նաև գրենական պիտույքներ, գրքեր, թերթեր, ամսագրեր և այլ գրականություն կարող է ձեռք բերել միայն գումարտակի տարածքում գտնվող հատուկ խանութից՝ անկանխիկ հաշվարկով:

7.2. Դատապարտյալը խանութից օգտվում է օրվա կարգացուցակով սահմանված ժամերին:

7.3. Դատապարտյալը, խանութից օգտվելու նպատակով, գրավոր դիմում (Հավելված 3) է ներկայացնում գումարտակի հրամանատարին իր անմիջական պետի (հրամանատարի) միջոցով, որտեղ նշվում է այն իրերի և առարկաների ցանկը, որոնք ցանկանում է ձեռք բերել: Հրամանատարը, ստուգելով ներկայացված դիմումի հիմնավորվածությունը և դատապարտյալի անձնական հաշվում դրամի առկայության հանգամանքը՝ տալիս է համապատասխան թույլտվություն՝ դիմումն ստանալուց 24 ժամվա ընթացքում:

7.4. Սննդամթերք եւ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու նպատակով դատապարտյալն իրավունք ունի իր անձնական հաշվից ծախսելու Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի (այսուհետ՝ սահմանված նվազագույն աշխատավարձ) մինչեւ երեսնապատիկի չափով գումար:

7.5. Դտապարտյալին արգելվում է իր մոտ ունենալ, հանձնումներով, ծանրոցներով ստանալ կամ ձեռք բերել հետևյալ իրերը, առարկաները և սննդամթերքը՝

ա) ցանկացած տեսակի հրազեն և սառը զենք,

բ) ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, ռադիոկապ և այլն),

գ) կանխիկ դրամ, այդ թվում՝ արտարժույթ, արժեթղթեր, ինչպես նաև թանկարժեք իրեր,

դ) ապակյա և մետաղյա տարաներ,

ե) օպտիկական սարքեր (բացառությամբ ակնոցները),

զ) ցանկացած տեսակի ալկոհոլային խմիչքներ,

է) սպիրտային հիմքեր ունեցող այլ նյութեր,

ը) թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր, առանց բժշկական եզրակացության դեղամիջոցներ և բժշկական նշանակության իրեր,

թ) կացին, մուրճ և այլ գործիքներ,

ժ) դանակ, ածելու շեղբ կամ կտրող-ծակող այլ առարկաներ, որոնք իրենց կառուցվածքով նման են սառը զենքի,

ժա) խաղաթղթեր,

ժբ) ֆոտոխցիկ, տեսախցիկ, ձայնագրող սարքեր և նկարահանող այլ տեխնիկա,

ժգ) պայթյունավտանգ, թունավոր, հրդեհավտանգ և ռադիոակտիվ նյութեր,

ժդ) տոպոգրաֆիկ քարտեզներ, կողմնացույցներ,

ժե) ներկեր, ներկանյութեր և սոսնձանյութեր,

ժզ) երաժշտական գործիքներ,

ժէ) ցանկացած տեսակի փաստաթուղթ (բացառությամբ քրեական գործին վերաբերող կամ իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող փաստաթղթերը և գրառումները, եթե դրանք չեն պարունակում պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք).

ժը) խմորիչ, տնային պայմաններում պատրաստված պահածոներ,

ժթ) սննդամթերք, որի օգտագործման համար անհրաժեշտ է ջերմային մշակում (բացառությամբ թեյի, սուրճի, կաթի փոշու, արագ պատրաստվող խտածո սննդամթերքների),

ի) պոռնոգրաֆիկ նկարներ և իրեր,

իա) էլեկտրակենցաղային իրեր (բացառությամբ էլեկտրական ածելիների, գործարանային արտադրության էլեկտրական ջեռուցիչների և սալիկների, որոնք կարող են օգտագործվել կացարանների ջեռուցման նպատակով),

իբ) քաղաքացիական հագուստ,

իգ) ծավալով մեծ, ինչպես նաև սանիտարահիգիենիկ կամ այլ նկատառումներով ոչ նպատակահարմար առարկաներ,

իդ/ քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ և նյութեր:

8. Արգելված իրերի և առարկաների առգրավման, դատապարտյալի և նրա կացարանի խուզարկության ու իրերի զննության կարգը

8.1. Գումարտակում արգելված իրեր և առարկաներ հայտնաբերելու ու առգրավելու, ինչպես նաև դրանց ներթափանցումը գումարտակ կանխարգելելու նպատակով, գումարտակի հրամանատարի կողմից նշանակված պաշտոնատար անձինք կատարում են դատապարտյալի խուզարկություն և գումարտակի տարածք մուտք գործող անձանց իրերի, հագին կրած հագուստի, ստացված հանձնումների ու փաթեթների զննություն:

8.2. Զննության ժամանակ, մինչ դրա կատարումը, դատապարտյալին և այլ անձանց ներկայացվում է արգելված իրերի ցանկը և առաջարկվում է կամովին հանձնել դրանք:

8.3. Դատապարտյալը խուզարկության է ենթարկվում գումարտակ ընդունման, գումարտակից ազատվելու, գումարտակի տարածքից դուրս գալու, կացարան և պատժախուց տեղափոխվելու ժամանակ, տեսակցություններից առաջ և հետո:

8.4. Այլ անձինք խուզարկության են ենթարկվում դատապարտյալի հետ հանդիպելուց առաջ և հետո, որի ժամանակ նրանցից պահանջվում է ցույց տալ հագին եղած հագուստի գրպանների, պայուսակների և իրենց մոտ գտնվող առարկաների պարունակությունը: Ստուգվում են նաև կոշիկները, բերանի խոռոչը և գլխի մազերը: Հագուստի զննությունը, եթե կապված է անձի մերկացման հետ, կատարվում է տվյալ սենյակում առանձնացված հանդերձարանում:

8.5. Դատապարտյալի խուզարկությունը կատարվում է գումարտակի առնվազն երկու պաշտոնատար անձնանց միջոցով, որն ուղեկցվում է նրա հագին եղած հագուստի, կոշիկների, իրերի, գլխի մազերի, բերանի խոռոչի, պրոթեզների մանրակրկիտ ստուգմամբ: Պրոթեզները, կպչուն, գիպսային և այլ վիրակապերը ստուգվում են բուժաշխատողի մասնակցությամբ:

8.6. Դատապարտյալի մերկացման հետ կապված խուզարկությունն իրականացվում է սույն Կանոնակարգի 8.4 կետի համաձայն:

8.7. Խուզարկության և զննության արդյունքներով հայտնաբերված արգելված իրերն ու առարկաները առգրավում են համապատասխան արձանագրության կազմամբ:

8.8. Այլ անձանց խուզարկության և իրերի զննության ընթացքում հայտնաբերված և առգրավված արգելված իրերի և առարկաների կապակցությամբ կազմված նյութերն ուղարկվում են համապատասխան իրավապահ մարմիններ՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

8.9. Խուզարկության և զննության չեն ենթարկվում գումարտակ անարգել մուտքի ու ելքի իրավունք ունեցող անձինք:

8.10. Դատապարտյալը և այլ անձինք գումարտակի տարածքում իրավունք չունեն հրաժարվել հանձնել այն իրերն ու առարկաները, որոնք պահանջվել են գումարտակի պաշտոնատար անձի կողմից:

8.11. Խուզարկությունը և զննությունը կատարվում են բավարար ջերմաստիճանի լուսավոր սենյակում, որի ընթացքում անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները՝ հաշվի առնելով խուզարկվողի անձը և վիճակը:

8.12. Անձնական խուզարկությունը կատարվում է առնվազն երկու պաշտոնատար անձնանց մասնակցությամբ:

8.13. Խուզարկությունը կատարվում է անձի պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելու սկզբունքով՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը:

8.14. Հանցագործության օբյեկտ կամ առարկա, ինչպես նաև հատկանիշներ պարունակող իրերի հայտնաբերման փաստն արձանագրելուց հետո այդ մասին անհապաղ հայտնվում է իրավասու մարմիններին:

8.15 Խուզարկություն, զննություն կամ առգրավում կատարելուց հետո դրանց արդյունքներն արձանագրվում են պաշտոնատար անձի կողմից, որտեղ նշվում են գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, արդյոք կամովին են հանձնվել արգելված իրերն ու առարկաները, խուզարկություն կատարող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, խուզարկվողի և այլ մասնակիցների անունները, ազգանունները և կարգավիճակները: Եթե խուզարկվողը հրաժարվում է արձանագրության տակ ստորագրելուց, ապա այդ մասին արձանագրությունում համապատասխան նշում է կատարվում:

Խուզարկվողի և այլ մասնակիցների կողմից արված հայտարարություններն ու դիտողությունները մտցվում են արձանագրության մեջ:

8.16. Առգրավված այն իրերն ու առարկաները, որոնք ենթակա են վերադարձման, տվյալ անձին տրամադրվում է գումարտակի տարածքից դուրս գալու, իսկ դատապարտյալի պարագայում՝ պատժից ազատվելու ժամանակ: Առգրավված այն իրերն ու առարկաները, որոնք ենթակա չեն վերադարձման, ոչնչացվում են սույն Կանոնակարգին համաձայն, իսկ հանցագործության օբյեկտ կամ առարկա հանդիսացող իրերն ուղարկվում են համապատասխան մարմինների տնօրինությանը:

8.17. Դատապարտյալների կացարանի և պատժախցի խուզարկությունը լինում է պլանային և ոչ պլանային:

8.18. Պլանային խուզարկությունն անցկացվում է գումարտակի հրամանատարի կողմից հաստատված ժամանակացույցով:

8.19. Ոչ պլանային խուզարկությունն իրականացվում է կացարանում արգելված իրերի առկայության վերաբերյալ ստացված համապատասխան տեղեկությունների հիման վրա, ինչպես նաև գումարտակի հրամանատարի, տեղակալի և իրավասու անձի համապատասխան հրամանով:

8.20. Կացարանի և պատժախցի խուզարկությունն իրականացվում է դատապարտյալի ներկայությամբ, որի ընթացքում մանրակրկիտ ստուգվում են՝ պատուհանների վանդակաճաղերը, շերտավարագույրները, պատերը, հատակը, առաստաղը, մահճակալները, սեղանները, նստարանները, ինչպես նաև լվացարանների, ջեռուցման մարտկոցների, կոյուղու ու ջրատար խողովակների ամրացվածությունը:

8.21. Կացարանի և պատժախցի խուզարկության արդյունքներն արձանագրվում են համապատասխան հաշվառման մատյանում: Անսարքություններ կամ վնասվածքներ հայտնաբերելու դեպքում գումարտակի հրամանատարությունը միջոցներ է ձեռնարկում դրանց անհապաղ վերացման ուղղությամբ:

8.22. Կացարանի և պատժախցի խուզարկության ընթացքում հայտնաբերված արգելված իրերն ու առարկաները առգրավվում են սույն Կանոնակարգի համաձայն: Արձանագրության պատճենը կցվում է համապատասխան դատապարտյալի անձնական գործին:

8.23. Արգելված իրերի և առարկաների հայտնաբերման և առգրավվման նպատակով ստուգման են ենթարկվում նաև դատապարտյալին բերված հանձնուքները, ծանրոցները և անձնական իրերը, ինչն իրականացվում է հետևյալ կերպ՝

ա) հացաբուլկեղենը կտրատվում է,

բ) հեղուկ մթերքները լցվում են փոխարինող տարաների մեջ,

գ) պահածոները բացվում են և տեղափոխվում են մեկ այլ տարայի մեջ,

դ) ձուկը կտրատվում է մասերի,

ե) պանիրը, երշիկեղենը և մսեղենը կտրատվում են կտորների,

զ) սորուն մթերքները (շաքարավազ, աղ և այլն) լցվում են մեկ այլ տարայի մեջ,

է) ծխախոտների տուփերը բացվում և ստուգվում են,

ը) կոնֆետներն ընդունվում են առանց փաթեթավորման, կտրատվում են կտորների,

ժ) գրքերը, ամսագրերը և այլ տպագրական հրատարակչությունները թերթվում են՝ թաքստոցներ, պայմանական նշումներ հայտնաբերելու նպատակով, գրքերի կազմերը շոշափվում են:

Բոլոր այն մթերքները, որոնք կարող են օգտագործվել արգելված իրեր և առարկաներ թաքցնելու համար ստուգվում են նույն կերպ:

8.24. Ստուգումը կատարվում է այնպես, որպեսզի մթերքները չկորցնեն իրենց հատկությունները: Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել տեխնիկական միջոցներ:

8.25. Դատապարտյալի համար բերված հանձնուքների, ծանրոցների և անձնական իրերի զննության ընթացքում հայտնաբերված և առգրավված արգելված իրերի և առարկաների կապակցությամբ կազմված նյութերն ուղարկվում են համապատասխան իրավապահ մարմիններ՝ պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

8.26. Հանցագործության հատկանիշներ պարունակող առգրավված իրերն ու առարկաները ուղարկվում են իրավապահ մարմիններին:

8.27. Դատապարտյալի մոտից հայտնաբերված և առգրավված արգելված իրերն ու առարկաները տրվում են պահպանության կամ ոչնչացվում են սույն Կանոնակարգի համաձայն՝ գումարտակի հրամանատարի պատճառաբանված որոշմամբ:

8.28. Առգրավված իրերի և առարկաների տնօրինության վերաբերյալ ցանկացած հարցի լուծման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն կամ տրվում ստացական:

8.29. Առգրավված իրերի ոչնչացման նպատակով գումարտակի հրամանատարի կողմից կազմվում է հանձնաժողով:

8.30. Դատապարտյալից առգրավված ոչ արժեքավոր իրերը հանձնվում են պահպանման կամ գումարտակի հրամանատարի որոշմամբ ոչնչացվում են, ինչի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն և ծանոթացվում դատապարտյալին՝ նրանից վերցնելով ստորագրություն: Նմանատիպ որոշում կայացվում է նաև սննդամթերքի նկատմամբ, որը ստացվել է ոչ սահմանված կարգով: Ոչնչացումը պետք է կատարվի այնպես, որպեսզի բացառվի նրա հետագա օգտագործումը: Առգրավված իրերը ոչնչացվում են՝ հաշվի առնելով իրի կամ առարկայի հատկությունը, նշանակությունը և դրա ոչնչացման համար նախատեսված պայմանները:

8.31. Գումարտակի տարածքում հայտնաբերված և տիրազուրկ ճանաչված արժեք ներկայացնող իրերի ու առարկաների տնօրինության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. *Դատապարտյալի նամակագրության, դրամական փոխանցումների ստացման կարգը*

9.1. Դատապարտյալի կողմից սեփական միջոցներով նամակներ ուղարկելն ու ստանալն իրականացվում է միայն գումարտակի հրամանատարության միջոցով, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու: Այդ նպատակով կացարանում տեղադրվում են փոստարկղեր, որոնք բացվում են յուրաքանչյուր օրվա ավարտին, գումարտակի հրամանատարության համապատասխան ներկայացուցչի կողմից, նամակների առկայության ստուգման նպատակով: Նամակագրությունը ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով: Դատապարտյալի անունով՝ տեղափոխման պատճառով նրա բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր:

9.2. Նամակները փոստարկղն են գցվում կամ տրվում են գումարտակի հրամանատարության ներկայացուցչին փակ վիճակում:

9.3. Դատապարտյալին հասցեագրված դրամական փոխանցումները փոխանցվում են նրա անձնական հաշվին: Դատապարտյալին թույլատրվում է առանց սահմանափակման կատարել եւ ստանալ դրամական փոխանցումներ, ինչպես նաեւ իր հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման:

10. Դատապարտյալի հեռախոսակապից օգտվելու կարգը

10.1. Դատապարտյալն օրակարգով նախատեսված ժամերին կարող է օգտվել գումարտակի տարածքում տեղակայված հեռախոսակապից՝ հեռախոսաքարտերի միջոցով:

10.2. Հեռախոսակապից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր օրվա համար չի կարող գերազանցել 10 րոպեն:

10.3. Գիշերային ժամերին հեռախոսակապից օգտվելն, ինչպես նաև օրվա համար նախատեսված ժամաքանակն այլ օրերի վրա հաշվանցելը չի թույլատրվում: Դատապարտյալների միջև հեռախոսակապն արգելվում է:

10.4. Գումարտակի հրամանատարությունը, հաշվի առնելով դատապարտյալի կողմից ներկայացված հիմնավոր պատճառաբանությունը, կարող է երկարացնել հեռախոսակապից օգտվելու տևողությունն անհրաժեշտ քանակով:

10.5. Հեռախոսակապից օգտվելու գործնթացը հաշվառվում է համապատասխան մատյանում, որտեղ նշվում է դատապարտյալի անվանական տվյալները, հեռախոսակապից օգտվելու հաճախականությունը և տևողությունը:

10.6. Դատապարտյալները հեռախոսակապից օգտվում են գումարտակի հրամանատարի կողմից հաստատված գրաֆիկի համաձայն:

11. Դատապարտյալի կողմից ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ ուղարկելու և ստանալու կարգը

11.1. Գումարտակում գտնվելու ժամանակահատվածում դատապարտյալին թույլատրվում է ստանալ անսահմանափակ քանակությամբ ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ:

11.2. Ծանրոցները, հանձնուքները և փաթեթները ընդունվում են այդ նպատակով նախատեսված սենյակում, որտեղ դրվում են՝ սեղան, հսկիչ կշեռք, աթոռներ, արգելված իրերի և առարկաների ցանկը: Տեսանելի վայրերում փակցվում են քաղվածքներ հանձնուքների, ծանրոցների և փաթեթների հանձման կարգը լուսաբանող փաստաթղթերից, ինչպես նաև սենյակի աշխատանքի կարգացուցակը:

11.3. Ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ բերող անձը սահմանված կարգով երկու օրինակից լրացնում և ստորագրում է դիմում (Հավելված 4): Դիմումի երկու օրինակները, ինչպես նաև հանձնուք բերողի անձը հաստատող փաստաթուղթը հանձնվում են գումարտակի համապատասխան պաշտոնատար անձին: Ստուգելով դիմումատուի ինքնությունը՝ վերջինս կատարում է համապատասխան ձևակերպումներ:

11.4. Ընդունելով ծանրոցը, հանձնուքը կամ փաթեթը՝ գումարտակի համապատասխան պաշտոնատար անձն այցելուին վերադարձնում է անձը հաստատող փաստաթուղթը և դիմումի մեկ օրինակը՝ նշում կատարելով ընդունման մասին: Դիմումի երկրորդ օրինակը դատապարտյալի կողմից ծանրոցը, հանձնուքը կամ փաթեթը ընդունելուց հետո կցվում է նրա անձնական գործին: Եթե դատապարտյալը հրաժարվում է ստանալ իրեն ուղղարկված ծանրոցը, հանձնուքը կամ փաթեթը, ապա այդ մասին համապատասխան նշում է կատարվում հիշյալ դիմումում:

11.5. Ծանրոցների, հանձնուքների և փաթեթների զննումը կատարվում է գումարտակի առնվազն երեք պաշտոնատար անձանց կողմից: Ծանրոցների և փաթեթների զննումը կատարվում է դատապարտյալների ներկայությամբ, իսկ հանձնուքները՝ դրանք հանձնողների ներկայությամբ: Հայտնաբերված դրամը, արժեքավոր կամ արգելված իրերն առգրավվում են և տնօրինվում սույն Կանոնակարգով սահմանված կարգով: Զննության մասին կազմվում է համապատասխան արձանագրություն, որում նշվում է զննությանը մասնակցած անձանց տվյալները, կարգավիճակը, առկա իրերի և սննդամթերքի անվանումը, դրանց արտաքին նկարագրությունը, որակը, թվարկվում են առգրավված կամ պահման հանձնված առարկաները և սննդամթերքը, որից հետո կազմված արձանագրությունը կցվում է դատապարտյալի անձնական գործին, իսկ ծանրոցները, փաթեթները և հանձնուքները հանձնվում վերջինիս: Ծանրոցների, փաթեթների և հանձնուքների հաշվառումն իրականացվում է համապատասխան քարտում (Հավելված 5):

11.6. Գումարտակից տեղափոխված դատապարտյալների անունով ստացված ծանրոցները, հանձնուքները և փաթեթները վերադարձվում են դրանք հանձնողին կամ ուղարկողին՝ նշելով վերադարձման պատճառը:

11.7. Ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ չեն ընդունվում և վերադարձվում են ուղարկողին կամ հանձնողին, եթե բերող անձը չի ներկայացնում համապատասխան փաստաթղթեր կամ դատապարտյալը հրաժարվում է դրանք ընդունել:

11.8. Պատժախցում գտնվող դատապարտյալին ուղարկված ծանրոցները, հանձնուքները և փաթեթները նրանց են հանձնվում տույժը կրելուց հետո: Գումարտակի հրամանատարությունը ապահովում է ծանրոցների, հանձնուքների և փաթեթների պարունակության պահպանումը, սակայն պատասխանատվություն չի կրում սննդի կամ այլ իրերի բնական փչացման համար:

12.. Դատապարտյալին տեսակցություն տրամադրելու կարգը

12.1. Դատապարտյալին մերձավոր ազգականների և այլ անձանց հետ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով նախատեսված կարճատև տեսակցության տրամադրումն իրականացվում է գումարտակի հրամանատարի որոշման համաձայն՝ տեսակցություն հայցող անձի դիմումի հիման վրա:

12.2. Տեսակցության տրամադրման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում դատապարտյալի համաձայնությունը և տեսակցություն հայցող անձի դիմումի հետ կցված վերջինիս անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը:

12.3. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով տեսակցությունների համար սահմանված նվազագույն քանակից ավելի տեսակցություն չի տրամադրվում բացասական բնութագրվող, ոչ օրինապահ վարքագիծ դրսևորող, պատիժը կրելու սահմանված կարգը խախտող դատապարտյալին: Տեսակցության թույլտվության մերժումը կատարվում է գումարտակի հրամանատարի պատճառաբանված որոշմամբ:

12.4. Տեսակցության համար սահմանված դիմումի վերաբերյալ համապատասխան որոշումը կայացվում է անհապաղ:

12.5. Մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է գումարտակի հրամանատարության ներկայացուցչի /ներկայացուցիչների/ հսկողությամբ: Այն կարող է վաղաժամկետ դադարացվել նշված անձի /անձանց/ կողմից՝ դատապարտյալին սույն Կանոնակարգով նախատեսված արգելված իրեր և առարկաներ փոխանցելու կամ փոխանցման փորձ կատարելու փաստի հայտնաբերման դեպքում:

12.6. Կարճատև տեսակցությունն անցկացվում է աշխատանքային ժամերին, մինչև ժամը 18.00-ն:

12.7. Տեսակցության ժամանակահատվածում դատապարտյալն ազատվում է գումարտակում սահմանված օրվա կարգացուցակով նախատեսված պարտականությունների կատարումից:

12.8. Գումարտակի հրամանատարությունը տեսակցության եկած անձանց ծանոթացնում է տեսակցության անցկացման կարգին և պայմաններին: Մինչև տեսակցությունը նշված անձինք իրենց մոտ գտվող սույն Կանոնակարգով արգելված իրերն ու արժեքները ստորագրությամբ հանձնում են պահպանության, որոնք վերադարձվում են գումարտակի տարածքից դուրս գալու ժամանակ:

12.9. Տեսակցության եկած անձանց կողմից բերված սննդամթերքը, իրերը և առարկաները, որոնք սույն Կանոնակարգով արգելված չեն, դատապարտյալին են փոխանցվում որպես հանձնուք:

12.10. Իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դատապարտյալին իր դիմումի հիման վրա փաստաբանների կամ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեսակցություն է տրամադրվում առանց դրա քանակի սահմանափակման, աշխատանքային օրերին և ժամերին, դատապարտյալին կարճատև տեսակցություն տրամադրելու համար օրենքով և սույն Կանոնակարգով սահմանված կարգով:

12.11. Տեսակցությունների վերաբերյալ համապատասխան գրանցումներ են կատարվում դրա համար նախատեսված մատյանում (Հավելված 6), ինչպես նաև դատապարտյալի անձնական գործում:

13. Դատապարտյալին կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու կարգը

13.1. Կարճաժամկետ մեկնում տրամադրելու համար համապատասխան որոշումը կայացվում է գումարտակի հրամանատարի կողմից՝ դատապարտյալի գրավոր դիմումի և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով նախատեսված դեպքերը փաստող անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա: Որոշման մեջ նշվում է դատապարտյալի անվանական տվյալները, ծննդյան թիվը, պատժաչափը, պատժի կրման ժամանակը, մեկնում տրամադրելու հիմքերի և դրանք փաստող փաստաթղթերի համառոտ բովանդակությունը, մեկնման ժամանակը, տևողությունը և վայրը, ինչպես նաև մեկնումը գումարտակի հրամանատարության ներկայացուցչի ուղեկցությամբ իրականացվելու անհրաժեշտությունը:

13.2. Կարճաժամկետ մեկնման թույլտվություն ստացած դատապարտյալին տրվում է սահմանված նմուշի վկայական (Հավելված 7), նրան բացատրվում է մեկնման կարգը և նախազգուշացվում է սահմանված ժամկետում գումարտակ վերադառնալուց խուսափելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչի համար դատապարտյալից վերցվում է ստորագրություն (Հավելված 8):

Ստորագրությունը կցվում է դատապարտյալի անձնական գործին:

13.3. Առանց գումարտակի հրամանատարության ներկայացուցիչների ուղեկցության կարճաժամկետ մեկնման մեջ գտնվող դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համապատասխան կայազորի ռազմական ոստիկանության բաժինը: Այս դեպքում գումարտակի հրամանատարությունը դատապարտյալի մեկնելու մասին անհապաղ հայտնում է տվյալ կայազորի ռազմական ոստիկանության բաժնին:

13.4. Մեկնման վայր հասնելուց հետո դատապարտյալը պարտավոր է մեկ օրվա ընթացքում ներկայանալ համապատասխան կայազորի ռազմական ոստիկանության բաժին: Դատապարտյալի ժամանման և գումարտակ մեկնելու վերաբերյալ համապատասխան նշումը կատարվում է նրան տրված վկայականում: Գիշերային ժամերին կամ վաղ առավոտյան գումարտակ վերադառնալու պարագայում այդ մասին նշումը կատարվում է նախորդ օրվա ամսաթվով: Ժամանման և գումարտակ մեկնելու մասին նշումները վավերացվում են համապատասխան կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կնիքով:

13.5. Դտապարտյալի գումարտակ վերադառնալուն պես նրան տրված վկայականը վերցվում է:

13.6. Դատապարտյալի գումարտակ ժամանակին վերադառնալուն խոչընդոտող անկանխատեսելի հանգամանքների դեպքերում (տարերային և տեխնածին աղետներ, ընտանիքին սպառնացող անմիջական վտանգ, մերձավոր ազգականի մահ) համապատասխան կայազորի ռազմական ոստիկանության բաժնի պետը Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով նախատեսված ժամկետների սահմաններում կարող է երկարացնել մեկնման և ճանապարհի համար նախատեսված ժամանակը: Տվյալ դեպքում ռազմական ոստիկանության բաժնի պետի կողմից գումարտակի հրամանատարին տեղեկացնելով՝ դատապարտյալին տրված վկայականի հետևի մասում համապատասխան ստորագրության և կնիքի վավերացմամբ, կատարվում է նշում երկարացման հիմքերի ու երկարացված ժամանակի տևողության մասին:

13.7. Եթե դատապարտյալը մեկնման ժամանակահատվածում հիվանդացել է կամ ստացել այնպիսի մարմնական վնասվածքներ, որոնց բուժումը պահանջում է ստացիոնար պայմաններ, ապա բուժում ստանալու նպատակով նա համապատասխան կայազորի ռազմական ոստիկանության բաժնի կողմից ուղեգրվում է զինծառայողների համար նախատեսված առողջապահական հիմնարկներ և պահվում հատուկ հիվանդասենյակներում: Նշված հիմնարկի հրամանատարությունը պարտավոր է դատապարտյալի ընդունման դեպքում այդ մասին անհապաղ տեղյակ պահել գումարտակի հրամանատարին և տվյալ կայազորի ռազմական ոստիկանության բաժնի պետին:

14. Դատապարտյալի անձնական անվտանգության ապահովումը

14.1. Դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև գումարտակում դատապարտյալի հետագա գտնվելուն խոչնդոտող այլ բացառիկ հանգամանքների դեպքերում գումարտակի հրամանատարը զեկուցագրով դիմում է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության պետին՝ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

14.2. Զեկուցագիրը ներկայացվում է դատապարտյալի դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատապարտյալի անձնական անվտանգության իրական սպառնալիքի, ինչպես նաև նրա գումարտակում հետագա գտնվելուն խոչնդոտող կոնկրետ դեպքի առկայության պայմաններում, եթե սպառվել են սպառնալիքի կամ բացառիկ դեպքի վերացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները և դրանք արդյունք չեն տվել:

14.3. Գումարտակի հրամանատարությունը պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռք առնել դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, իսկ մինչ տվյալ հարցի լուծումը՝ դատապարտյալը մեկուսացվում է:

14.4. ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության պետը զեկուցագիրն ստանալուց հետո ոչ ուշ քան երեք օրվա ընթացքում ձեռնարկում է միջոցներ հարցը լուծելու նպատակով:

15. Դատապարտյալի նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները, դրանց կիրառման դեպքերը և կարգը

15.1. Օրինապահ վարքագիծ դրսևորելու համար դատապարտյալի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) լրացուցիչ կարճատև տեսակցության տրամադրում.
2) նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում:

Դատապարտյալին խրախուսանքի կարգով կարգապահական գումարտակի հրամանատարի որոշմամբ կարող է տրամադրվել տարեկան լրացուցիչ մինչև երկու կարճատև տեսակցություն:

Սույն կետով սահմանված խրախուսանքի միջոցներից բացի, կարող են կիրառվել զինվորական կանոնակարգերով սահմանված խրախուսանքի այլ միջոցներ:

15.2. Խրախուսանքը պետք է լինի արդար, անաչառ և պետք է կիրառվի միայն համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում կայացված գումարտակի հրամանատարի որոշման հիման վրա:

15.3. Դատապարտյալի նկատմամբ խրախուսանք կիրառելու որոշման մեջ նշվում են դատապարտյալի անվանական տվյալները, խրախուսման պատճառները, կատարված ուսումնասիրությունների արդյունքները և խրախուսանքի տեսակը:

15.4. Դատապարտյալի նկատմամբ կիրառված խրախուսանքի կապակցությամբ կազմված բոլոր փաստաթղթերը կցվում են նրա անձնական գործին:

15.5. Խրախուսանքի կիրառման մասին որոշումը ծանոթացվում է դատապարտյալին ստորագրություն վերցնելով՝ երեք օրվա ընթացքում:

15.6. Խրախուսանքի միջոցների բոլոր տեսակների կիրառման դեպքերը ենթակա են հաշվառման գումարտակի հրամանատարության կողմից:

16. Դատապարտյալների նկատմամբ կիրառվող տույժի միջոցները, դրանց կիրառման դեպքերը և կարգը

16.1.Դատապարտյալի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

1) նկատողություն,
2) խիստ նկատողություն,
3) կարգապահական կալանք՝ մինչև տասնհինգ օր ժամկետով:

16.2. Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցները կիրառվում են օրենքով, իրավական այլ ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված պատժի կրման կարգը եւ պայմանները խախտելու համար:

16.3. Տույժերը պետք է ծայրահեղ միջոցներ լինեն և հնարավորության դեպքում գումարտակի հրամանատարությունը նախ և առաջ պետք է ձեռնարկի օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ միջոցներ՝ խախտումը ծնող պատճառների և պայմանների վերացման համար:

16.4. Դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժը պետք է համապատասխանի թույլ տրված խախտման ծանրության աստիճանին: Տույժը պետք է լինի արդար, անաչառ և պետք է կիրառվի միայն համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում կայացված գումարտակի հրամանատարի որոշման հիման վրա:

16.5. Դատապարտյալի նկատմամբ տույժ կիրառելու որոշման մեջ նշվում են դատապարտյալի անվանական տվյալները, խախտման բնույթն ու հետևանքները, կատարված ուսումնասիրությունների արդյունքները և տույժի տեսակը:

16.6. Կատարված խախտման կապակցությամբ դատապարտյալից պահանջվում է գրավոր բացատրություն, իսկ այն տալուց հրաժարվելու դեպքում կազմվում է համապատասխան տեղեկանք:

16.7. Դատապարտյալի կողմից կատարված խախտման կապակցությամբ կազմված բոլոր փաստաթղթերը կցվում են նրա անձնական գործին:

16.8. Առավել խիստ տույժի միջոց կիրառվում է առավել ծանր կամ կրկնակի կատարված, խմբակային բնույթ կրող և անկարգություններ սաղրող խախտումների համար:

16.9. Տույժը չի կարող կիրառվել, եթե խախտում կատարելու օրվանից անցել է երկու ամսից ավել ժամանակ:

16.10. Տույժի կիրառման մասին որոշումը ծանոթացվում է դատապարտյալին ստորագրություն վերցնելով՝ երեք օրվա ընթացքում:

16.11. Դատապարտյալի կողմից տույժի միջոցի բողոքարկումը չի կասեցնում տույժի կիրառումը:

16.12. Տույժի միջոցների բոլոր տեսակների կիրառման դեպքերը ենթակա են հաշվառման գումարտակի հրամանատարության կողմից:

16.13. Կարգապահական կալանքը դատապարտյալը կրում է գումարտակի պատժախցում: Կարգապահական կալանք կրելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուքներ ու ծանրոցներ ստանալը եւ ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից եւ զանգվածային լրատվությունից օգտվելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

17. Պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովման պայմանները

17.1. Պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովումը իրականացվում է սահմանված նորմերին համապատասխան:

17.2. Մինչև պատժախուց տեղափոխվելը դատապարտյալի մոտ եղած սնունդը հանձնվում է պահպանության և վերադարձվում տույժը կրելուց հետո: Գումարտակի հրամանատարությունը միջոցներ է ձեռնարկում սննդի պահպանման ուղղությամբ, սակայն դրանց բնական փչացման համար պատասխանատվություն չի կրում: Սննդամթերքի փչացման դեպքերում այն ոչնչացվում է, ինչի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն և կցվում դատապարտյալի անձնական գործին:

17.3. Դատապարտյալին արգելվում է պատժախցում իր մոտ պահել անձնական իրեր, բացառությամբ սրբիչի, օճառի, ատամի մածուկի, խոզանակի և սափրվելու պարագաների:

17.4. Պատժախցում պահվող դատապարտյալի կողմից տույժը կրելու ընթացքում պատժի կրման կարգի և պայմանների խախտում թույլ տալու դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել սահմանված պատասխանատվության միջոցներ:

17.5. Պատժախցում պահվող դատապարտյալի սննդի ընդունումը, ինչպես նաև բուժզննումը և ամբուլատոր բուժումն իրականացվում է պատժախցերում: Սանիտարական մշակումն անց է կացվում այլ դատապարտյալներից անջատ:

17.6. Պատժախցում պահվող դատապարտյալի անկողնային պարագաները տրվում են միայն քնելու համար սահմանված ժամերին:

17.7. Պատժախցի մաքրումն իրականացվում է այնտեղ պահվող դատապարտյալի կողմից, համապատասխան պաշտոնատար անձի հսկողությամբ, որը դատապարտյալին ապահովում է անհրաժեշտ պարագաներով:

18.. Դատապարտյալի նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովումը, անձնական հիգիենայի պահպանման պայմանները

18.1. Դատապարտյալի նյութակենցաղային եւ բուժսանիտարական ապահովումն իրականացվում է զինվորական կանոնագրքերով սահմանված չափանիշներով:

18.2. Հիվանդանոցային պայմաններում բուժման կարիք ունեցող դատապարտյալը պահախմբի հսկողությամբ փոխադրվում է զինծառայողների համար նախատեսված առողջապահական հիմնարկ եւ պահվում է հատուկ հիվանդասենյակում:

18.3.Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման պայմանների ապահովումն իրականացվում է գումարտակի հրամանատարության կողմից՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զինծառայողների համար սահմանված կարգով:

18.4. Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման առաջնահերթ պայման է հանդիսանում գումարտակի տարածքի, շենքերի և շինությունների, դատապարտյալների կացարանի, կենցաղային իրերի և պարագաների ամենօրյա մաքրության ապահովումը:

18.5. Դատապարտյալը պարտավոր է ապահովել իր անձնական հիգիենիայի պահպանման կանոնները, որի պատշաճ կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է գումարտակի հրամանատարության կողմից:

18.6. Յուրաքանչյուր դատապարտյալ պատասխանատու է կացարանի մաքրության պահպանման համար: Նա պետք է մաքուր և առանձնացված պահի իրեն հատկացված հիգիենայի անհրաժեշտ պարագաները, հագուստն ու կենցաղային իրերը, ունենա կոկիկ արտաքին և մաքուր քնելատեղ:

19. Արտակարգ իրավիճակների դեպքում գումարտակի գործունեության առանձնահատկությունները

19.1. Տարերային կամ տեխնածին աղետների, գումարտակի տեղակայման շրջանում արտակարգ իրավիճակի, ռազմական դրության, զանգվածային անկարգության, կամ գումարտակի վրա հարձակման իրական վտանգի դեպքում գումարտակի հրամանատարը այդ մասին անապաղ հայտնում է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության պետին և ձեռնարկում իրավիճակից բխող անհրաժեշտ միջոցառումներ:

19.2. Գումարտակում արտակարգ իրավիճակ հայտարարվում և դադարեցվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ մինչև երեսուն օր ժամկետով:

19.3. Գումարտակում ներքին կանոնակարգը արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում սահմանում է ՀՀ պաշտպանության նախարարը:

19.4. Արտակարգ իրավիճակում գումարտակի գործունեության համար ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ կազմվում է միջոցառումների պլան, որն իր մեջ ներառում է՝ գումարտակում անվտանգության ապահովման կարգը, արտակարգ իրավիճակում դատապարտյալների պաշտպանությանն ուղղված անվտանգության ապահովման գործառույթները՝ կապված արտակարգ իրավիճակի բնույթից և վտանգավորության աստիճանից, ղեկավարման համակարգը, քաղպաշտպանության կազմակերպումը և այլ ըստ անհրաժեշտության կարևոր նշանակություն ունեցող հանգամանքներ:

19.5. Արտակարգ իրավիճակներում գործելու պլանները ենթակա են ամենամյա վերանայման, որտեղ իրականացվում են անհրաժեշտ ուղղումներ և փոփոխություններ:

Հավելված 1

Ցանկ

Դատապարտյալներին թույլատրված իրերի և առարկաների, որոնք կարելի է ստանալ հանձնուքների, փոխանցումների միջոցով և ձեռք բերել անկանխիկ գնման ձևով

1. ծխախոտ, լուցկի
2. դատապարտյալների համար սահմանված համազգեստ, գլխարկ,
3. ներքնազգեստ (տաք և հասարակ)
4. թաշկինակներ, գուլպաներ, զինվորական թաթմաններ, թելեր և ասեղ, սրբիչներ
5. հիգիենայի պարագաներ (տնտեսական, ձեռքի օճառ, ատամի խոզանակ, ատամի փոշի կամ մածուկ, քսուկներ, սանր)
6. գրպանի հայելի, էլեկտրական կամ մեխանիկական ածելի, միանգամյա օգտագործման անվտանգ ածելի
7. կոշիկի և հագուստի խոզանակներ, կոշիկի քսուկ
8. պլաստմասայից պատրաստված տուփեր ակնոցների, օճառի և ատամի խոզանակների համար,
9. սեղանի խաղեր, բացի խաղաթղթերից
10. դասագրքեր, տետրեր, փոստային ծրարներ, բացիկներ, դրոշմանիշներ, հասարակ մատիտներ, գրիչներ
11. գրականություն
12. լուսանկար, լուսանկարների ալբոմ
13. ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված խաչեր և պաշտամունքի առարկաներ
14. հենակներ, փայտե ձեռնափայտեր, պրոթեզներ
15. ոչ թակնարժեք մետաղներից պատրաստված ձեռքի կամ գրպանի ժամացույց
16. հեռուստա և ռադիո ընդունիչներ

Ծանոթություն.

1. Դատապարտյալներին տեղափոխելիս թույլ է տրվում վերցնել միայն անձնական իրեր, սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ, որոնք նրանք ձեռք են բերել սահմանված կարգով:

2. Հեռուստաընդունիչները և ռադիոընդունիչները կարող են ձեռք բերվել միայն ընդհանուր օգտագործման համար և տեղադրվել հրամանատարության կողմից որոշված տեղերում:

3. Չի թույլատրվում սույն ցանկում չնշված առաջին անհրաժեշտության առարկաների, արտադրական և այլ ապրանքների պահումը դատապարտյալների մոտ:

Հավելված 2

Անձնական հարցերով դատապարտյալների ընդունելության մատյան

_____
(ընդունելություն իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, կոչումը և ազգանունը)

_____

Սկսված_____
Ավարտված_____

h/h	Ընդունելության (դիմումի ներկայացման) ամսաթիվը	Ընդունելության եկած անձի ազգանունը, անվան սկզբնատառը	Առաջադրված հարցերի բովանդակությունը	Կայացված որոշումը	Նշում կատարման մասին
1	2	3	4	5	6

Ծանոթություն: Մատյանը կազմված է 2 մասից, պետք է լինի համարակալված, կարված, կնքված և գումարտակի հրամանատարի ստորագրությամբ հաստատված:

Հավելված 3

Անդորրագիր N_____

Դատապարտյալ_____
(ազգանուն, անուն, հայրանուն)

Անձնական հաշվեհամարում կա_____դրամ:

ֆինմասի պետ _____
«___»_____200 թ.

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլատրել ինձ ձեռք բերել հետևյալ ապրանքները.

h/h	Ապրանքի անվանումը	Քանակը	Տրված է	
			քանակ	գումար

Ընդամենը_____

_____
(դատապարտյալի ստորագրությունը)

ՍՏԱՑԱԿԱՆ

Ստացա_____ դրամի ապրանք:
տառերով)

Խնդրում են այդ գումարը հանել իմ անձնական հաշվից:

_____
(դատապարտյալի ստորագրությունը)

«___»_____200 թ.

Հավելված 4

ՀՀ ՊՆ կարգապահական գումարտակի հրամանատար
---------- - ին
(զինկոչում, անուն, ազգանուն)
քաղ. ---------- -ից
(անուն, ազգանուն, հասցե)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ՀՀ ՊՆ կարգապահական գումարտակում պահվող ---------- - ին հանձնելու համար ընդունել հետևյալ ծանրոցները (հանձնուքները, փաթեթները)՝

1.
2.
3.

Ծանոթացել եմ արգելված իրերի և առարկաների ցանկին, հայտնում եմ, որ ծանրոցում (հանձնուքում, փաթեթում) նման իրեր կամ առարկաներ չկան:

Դիմող՝ ----------
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հավելված 5

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ
ծանրոցների, փաթեթների և հանձնուքների հաշվառման

Հ/Հ	Հանձնորդի Ա.Ա.Հ	Ում է հանձնվում	ամիս, ամսաթիվ	Նշում արգելված իրերի և առարկաների մասին

Հավելված 6

ՄԱՏՅԱՆ

տեսակցությունների վերաբերյալ գրանցումների

Հ/Հ	Տեսակցողի Ա.Ա.Հ	Ում հետ է տեսակցում	Ազգակցական կապը	ամիսը, ամսաթիվը	Տեսակցության տևողությունը	Նշումներ

250

ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՏՐՈՆ N

ՀՀ ՊՆ կարգապահական գումարտակի հրամանատարի _____
«___»_____200 թ. հրամանի հիման վրա
Դատապարտյալ _____
(ազգանուն, անուն, հայրանուն, ծննդյան թիվ,

_____
ՀՀ քր. օր. հոդված, պատժի կրման սկիզբը և ավարտը)

այն մասին, որ իրեն թույլատրված է կարճաժամկետ մեկնում կարգապահական գումարտակից, հիմք ընդունելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածը,

_____, _____ օրով, որից _____ օրը
(ժամանման վայրի անվանումը) (տառերով)
(տառերով)

ճանապարհի համար:

_____

_____
Վկայականը տրված է «___»_____200 թ.

_____
(դատապարտյալի ստորագրությունը)

Մեկնել է «___»_____200 թ.
Ժամանել է «___»_____200 թ.

Շարային մասի պետ _____
(ազգանուն)

_____
(ստորագրություն)

Կտրոնը մինչև կարճաժամկետ մեկնումից դատապարտյալի վերադարձը պահվում է գումարտակի շարային մասում: Վերադարձից հետո վկայականի հետ միասին կցվում է դատապարտյալի անձնական գործին:

Հավելված 8

Ստորագրություն

Ես՝ _____ ՀՀ ՔՕ _____
(դատապարտյալի անունը, ազգանունը, հայրանունը)
հոդվածի համաձայն «___»_____ _____ դատապարտված _____ ժամկետով կարգապահական գումարտակում պահելու, պարտավորվում եմ ինձ թույլատրված կարճաժամկետ մեկնումից վերադառնալ ժամանակին:

Ինձ նախազգուշացրել են այն մասին, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 81-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն սահմանված ժամկետում կարգապահական գումարտակ վերադառնալուց խուսափող դատապարտյալը ենթակա է քրեական պատասխանատվության:

Ինձ բացատրվել են կարգապահական գումարտակի սահմաններից դուրս գտնվելու ժամանակ իմ վարքագծի կանոնները և որ դրանք խախտելու դեպքում ենթակա եմ օրենքով սահմանված պատասխանատվության:

_____
(ստորագրություն)

«_____» _____ 200 թ.

Մեկնում «___»_____200 թ.

Ժամանում «___»_____200 թ.

Ստորագրությունը վերցրեց

_____
(ստորագրություն վերցնող զինծառայողի պաշտոնը,, կոչումը, ազգանունը)

_____
(զինծառայողի ստորագրությունը)

«___»_____200 թ.